ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/11388/02/24 ք. Երևան
29 Հունվարի 2025թ

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Դանիել Միսեյանի, քննության առնելով թիվ ԵԴ2/11388/02/24 քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑ

«ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Հայցվոր) հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ նաև Հայցվոր) ընդդեմ ՀՀ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի՝ հայցելով Անվավեր ճանաչել ՎԱ-ՍԱՏՄ-ԲՄԽԾՁԲ-25/18 գնման գործընթացի գնահատող հանձ-նաժողովի 23.12.2024թ. նիստի թիվ N 04 արձանագրության 3.2. և 3.3. կետերով կայացված՝ «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին և Պատվիրատուի ղեկավարին՝ «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-Ի նկատմամբ գնումների գործըն-թացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու վերաբերյալ ընթացակարգ նախաձեռնելու առաջարկության մասին որոշումները:
Դատարանը 03.01.2025 թվականին կայացրել է որոշում հայցադիմումը

վերադարձ-նելու մասին:
Հայցվորը հայցադիմումը կրկին 08.01.2025 թվականին ներկայացրել է դատարան:
Հայցվորը ներկայացրել է նաև միջնորդություն գործով դատական նիստ հրավիրելու մասին:
Կրկին ներկայացված հայցադիմումով հայցվորը հայցել է անվավեր ճանաչել ՎԱ-ՍԱՏՄ-ԲՄԽԾՁԲ-25/18 գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի 23.12.2024թ. նիստի թիվ N 04 արձանագրության 3.2. և 3.3. կետերով կայացված՝ «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին և Պատվիրատուի ղեկավա-րին՝ «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ի նկատմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու վերաբերյալ ընթացակարգ նախաձեռ-նելու առաջարկության մասին որոշումները, որպես հետևանք ամբողջությամբ անվավեր ճանաչել 26.12.2024թ թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումները՝ ուժի մեջ թողնե-լով 17.12.2024թ. թիվ 03 արձանագրության 4.1 կետով ամրագրված՝ շտկում կատարելու մասին որոշումը:
Դատարանը 14.01.2025 թվականին կայացրել է որոշում հայցադիմումը վերդարձ-նելու մասին՝ արձանագրելով, որ տեղի է ունեցել հայցի առարկայի փոփոխություն և հայցադիմումը հանդիսանում է նոր ներկայացված:
Հայցվորը հայցադիմումը կրկին ներկայացրել է դատարան 15.01.2025 թվականին:
Կրկին ներկայացված հայցադիմումով հայցվորը հայցել է անվավեր ճանաչել ՎԱ-ՍԱՏՄ-ԲՄԽԾՁԲ-25/18 գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի 23.12.2024թ. նիստի թիվ N 04 արձանագրության 3.2. և 3.3. կետերով կայացված՝ «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին և Պատվիրատուի ղեկավա-րին՝ «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-Ի նկատմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու վերաբերյալ ընթացակարգ նախաձեռ-նելու առաջարկության մասին որոշումները, որպես հետևանք ամբողջությամբ անվավեր ճանաչել 26.12.2024թ թիվ 5 արձանագրությամբ կայացված՝ ԲՄ ընթացակարգով պայմա-նագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը հաստատելու և 1-ին չափաբաժնի մասով՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած և հայտը բավարար գնահատված մասնակից՝ «ՅեՍոֆթ» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու, «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ի հայտերն անբավարար գնահատելու և մերժելու, Պատվիրա-տուի ղեկավարին՝ «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ի և նկատմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ ընթա-ցակարգ նախաձեռնելու առաջարկության, 10 օրացույցային օր անգործության ժամկետ սահմանելու, անգործության ժամկետի ավարտից հետո, Պայմանագիր կնքելու նպատա-կով, ընտրված

մասնակցին պայմանագրի նախագիծը ծանուցելու և 5 աշխատանքային օրվա ընթացքում իր կողմից հաստատված պայմանագիրը, պայմանագրի և որակավոր-ման ապահովումները ներկայացնելու առաջարկության մասին որոշումները՝ ուժի մեջ թող-նելով 17.12.2024թ թիվ 03 արձանագրության 4.1 կետով ամրագրված՝ շտկում կատարելու մասին որոշումը:
Դատարանը 21.01.2025 թվականին կայացրել է որոշում հայցադիմումը վերադարձ-նելու մասին:
Հայցվորը հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը ստացել է 21.01.2025 թ.-ին և հայցադիմումը կրկին ներկայացրել է 22.01.2025թ.-ին:
Հայցվորը հայցադիմումին կից ներկայացրել է նաև միջնորդություն՝ գործը քննել դատական նիստում, որպեսզի հայցվոր կողմը հնարավորություն ունենա տալ բացատրութ-յուններ և անել հայտարարություններ գնման գործընթացի հետ կապված:
Դատարանը 21.01.2025 թվականի որոշմամբ արձանագրել է, որ հայցադիմումում նշված չէ հայցվոր «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն և հայցվորը կրկին ներկայացրած հայցադիմումում նշել է, որ էլեկտրոնային համակարգի միջոցով տեխնիկական խնդրի պատճառով հնարավոր չի լինում հայցադիմումի ներածական բաժնի համապատասխան դաշտում ավելացնել Հայցվորի էլեկտրոնային փոստի հասցեն, որի արդյունքում Դատարանի աշխատակազմը ճշտումներ է կատարել էլեկտրոնային քաղաքացիական դատավարության համակարգը սպասարկող ընկերության անձնակազմի հետ, պարզել է, որ առկա է նման խնդիր, այն շտկվել է:
Արդյունքում Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը կրկին ներկայացվել է Օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված եռօրյա ժամկետի պահպանմամբ, ինչպես նաև վերացվել է Դատարանի 21.01.2025թ. որոշմամբ արձանագրված խախտումը, բացակայում են նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադի-մումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը:
Դատարանն արձանագրում է, որ սույն վեճը քննության է ենթակա ՔԴՕ 27.2 գլխով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում՝ հիմք ընդունելով ՔԴՕ 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է պատասխանող ՀՀ Սննդամթերքի անվտան-գության տեսչական մարմնից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխա-նողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Անդրադառնալով դատական նիստ հրավիրելու վերաբերյալ միջնորդությանը, Դատարանը գտնում է, որ այն ենթակա է բավարարման՝ ՔԴՕ 234.9-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, այն է՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ

դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ գործի լուծման համար նշանակություն ունեցող վկայակոչված հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Պատասխանող ՀՀ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնից պահան-ջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. Պարզաբանել կողմերին, որ՝
- ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատաս-խանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատար-վելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրա-պետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպան-ված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.
- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույց-ները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառ-ներով:
- Հայցադիմումի պատասխանը կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
- գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակ-ցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:
- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝

պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

4. Գործով հրավիրել դատական նիստ, որը տեղի կունենա 2025թ. փետրվարի 26-ին, ժամը 12:40-ին՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Էրեբունու նստավայրում, հասցե՝ ք.Երևան, Մ. Խորենացու 162ա շենք, 5-րդ հարկ, թիվ 6 դահլիճ:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by MKHEYAN DANIEL 2908790114
Date: 2025.01.29 15:03:03 AMT

Դատավոր՝ Դանիել Մխեյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am